ԿՈՄՊՈԶԻՏ ՄԵՏԱԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«04» դեկտեմբեր 2024

ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ղեկավար
պարոն Սուրեն Կոստանդյանին

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արտակ Ախլոյանից
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան,
Բաբայան փողոց, 22 ա շ., 15 բն.
Հեռ. +374 99 53 99 92
Էլ. փոստի հասցեք՝ compozitmetal@mail.ru

Ծանուցում

Հարգելի՝ պարոն Կոստանդյան,

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊ Ընկերությունը ցանկանում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի՝ Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում իրականացնի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, տարածքների ծայրակետային կեորդինատներն են

1. X=4523843.0000, Y=8457898.0000, 2. X=4524458.9654, Y=8456966.3854,
3. X=4524300.6693, Y=8456056.1073, 4. X=4523665.9295, Y=8456308.7157,
5. X=4522818.7771, Y=8458015.7669, 6. X=4521504.8467, Y=8458658.6876,
7. X=4521395.7576, Y=8458802.8378, 8. X=4522613.0000, Y=8459068.0000,) և
1. X=4521349.8370, Y=8459456.9301, 2. X=4522345.7443, Y=8459813.8075,
3. X=4522035.6982, Y=8460679.0266, 4. X=4521801.8913, Y=8461114.0162,
5. X=4520856.0007, Y=8460585.8750:

Նախատեսվող գործունեությունը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետով սահմանված գործունեությանը:

Նախատեսվող գործունեության նպատակը հետագայում օգտակար հանածոյի արդյունահանումն է:

Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը հետևյալն է՝
Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի՝ Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում, նպատակ ունենալով պարզաբանել օգտակար հանածոյի առկայության փաստը, դրա որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն համապատասխան պետական և

միջազգային տեխնիկական պահանջները: Բացահայտել երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, ուսումնասիրել տարածքի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանները: Արդյունքում կազմել օգտակար հանածոյի շահագործման տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորող տեխնիկատնտեսական հաշվարկներ և պաշարների հաշվարկով երկրաբանական հաշվետվություն:

Հաշվի առնելով վերոնշյալը, և ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածով, խնդրում եմ իրականացնել նշված հոդվածով սահմանված համապատասխան գործընթացները, և տալ նախնական համաձայնություն՝ նախատեսվող գործունեությունն իրականացնելու համար:

Հարգանքով,
«Կոպոզիտ մետալ» ՍՊԸ տնօրեն Արտակ Ախլոյան